ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» հոկտեմբեր 2014թ. N 32-Ա

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղեկատվության ազատության մասին>> Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 13-րդ հոդվածի դրույթները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված 43-րդ կետի գ/ ենթակետը

Հրամայում եմ

1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ /այսուհետ՝ պատասխանատու անձ/ նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Եկատերինա Խաչատրյանին:

2. Պատասխանատու անձի գործառույթների համակարգումը վերապահել աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ